ԼԵԶՎԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր

ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՏԻՊԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Պատկերավոր կայուն կապակցությունների կառուցատիպերը միջին հայերենում բնութագրվում են որոշակի կաղապարներով, որոնք բաժանվում են երկու խմբի՝ ա) անվանողական. *մաքուր որպէս հայելի, քաղցր զերդ զշաքար,* բ) հաղորդակցական. *շողշողել(իմ) որպէս զլոյս, երևալ զինչ զիրեշտակ:*

Այսպիսի կառուցատիպերի արտահայտության պլանում կարևորվում են կապակցության գլխավոր անդամի դրսևորման եղանակները, կախյալ բաղադրիչների քերականական հատկանիշները, կառույցի անդամների շարադասությունը, ինչպես նաև նախադրությունների տապակցելիական հնարավորությունները:

Հանգուցային բառեր – կայուն կապակցություն, բառակապակցություն, համեմատություն, կառուցատիպ, անվանողական, հաղորդակցական, գերադաս բաղադրիչ, կախյալ անդամ, նախադրություն:

Պատկերավոր կայուն կապակցությունները (ՊԿԿ) լեզառձական որոշակի արտահայտություններ են, որոնց հիմքում ընկած է պատկերավոր համեմատությունը, որը, իբրև փոխաբերության մի տեսակ, արտահայտում է համեմատելի հատկանիշ՝ երկու տարասեռ առարկաների և նրանց հատուկ ընդհանուր հատկանիշի հարաբերության միջոցով: Մասնագիտական գրականության մեջ այս կարգի կապակցությունները կոչվում են նաև համեմատություն դարձվածային միավորներ կամ համեմատություն դարձվածային արտահայտություններ[1]:

ՊԿԿ-ները գործառական լայն հնարավորություններ են դրսևորում մեր լեզվի բոլոր շրջաններում. գրաբարում հանդես են գալիս Աստվածաշունչ մատյանում, դասական և հետդասական հայերենի գրաբարալեզու երկերում, միջին հայերենի գրական հուշարձաններում, արդի գրական հայերենում՝ բնութագրվելով ոճական որոշակի դերով:

Այդ օրինակ կապակցությունները միջին հայերենում բնութագրվում են յուրահատուկ իմաստներով, որոշակի տարբերակներով ու կառուցատիպերով, որոնք ընդհանրություն ունենալով հայերենի տարբեր շրջանների համանման կառույցների հետ, միաժամանակ բնութագրվում են որոշակի տարբերակիչ գծերով:

Այդ կառույցների բաղադրիչները միջին հայերենում միավորվում են հետևյալ

1 Հմմտ. Խ.Բադիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986, էջք 1216-127, 140, 260-263: А. Г. Назарян, Фразеология современного французского языка, М., 1987, էջք 111-125, 194-199: Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Ե., 1990, էջ 50-51:

նախադրություններով՝ *զերդ // զերթ, զանչ, զէր // զէդ, զինչ, իբրև // իբր, չափ, ի չափ, որպէս, պէս, քան, նման, քանց* և այլն:

Ընդ որում, այդ նախադրությունները կապակցում են ինչպես անվանողական, այնպես էլ հաղորդակցական ՊԿԿ-ներ: Հմմտ.

ա) անվանողական ՊԿԿ-ներ.

մաքուր որպէս հայելի, խաղաղ իբրև զդրախտ, կեղծաւոր զանչ զսատանայ, քաղցր // անուշ զերդ զշաքար, անյաջող զերդ զգերի, պայծառ քան զքաֆուր վարդ և այլն:*բ) Հաղորդակցական ՊԿԿ-ներ.*

շողշողել(իմ) որպէս զլոյս, ճեմել(իմ) որպէս իշխան, նստել(իմ) որպէս արքայ, գունատվել զէր զզաֆրան, երևալ զինչ զիրեշտակ, զերդ կուպր եռալ և այլն:

Այս կարգի բաժանումով միաժամանակ կարելի է բնութագրել ՊԿԿ-ների կառուցատիպերը:

Միջին հայերենի ՊԿԿ-ները կարելի է ենթարկել նաև կառուցվածքային քննության: Ըստ այդմ, ի հայտ են գալիս նախադրությամբ ու որևէ հոլովով ձևավորված միագագաթ կառույցներ (զինչ առիւծ, զերթ գազան), ինչպես նաև նախադրությամբ կառույցով և ածական կամ բայ գերադաս բաղադրիչով ձևավորված (երկգագաթ) ստորադասական կապակցություններ (սեաւ իբրև զինդիկ, զինչ մոմ հալել (իմ)): Նրանցում տարբերակվում են ինչպես չծավալված, այնպես էլ ծավալումով միավորներ:

ՊԿԿ-ները բնութագրվում են նաև բառին ու բառակապակցությանը հատուկ քերականական հատկանիշներով, ուստի կարելի է խոսել ինչպես նրանց բառիմաստային հատկանիշների և ձևաբանական արժեքների, այնպես էլ տարբերակների ու կառուցատիպերի մասին:

Ըստ էության, բառակապակցությունների այս կարգի դասակարգումները լեզվի գոյավիճակների հետ կապ չունեն. այլ հարց է նրանց կառուցատիպերի քննությունը, որ կարող է պայմանավորված լինել տվյալ գոյավիճակի լեզվական յուրահատկություններով:

Ելնելով միջին հայերենի լեզվական միավորների իմաստակառուցվածքային առանձնահատկություններից՝ ներկայացնենք ՊԿԿ-ների կառուցատիպերը:

Ի. Անվանողական ՊԿԿ-ներ

Միջին հայերենում զգալի տեսակարար կշիռ են կազմում հատկապես բառակապակցական կամ անվանողական ՊԿԿ-ները, որոնք կառուցվածքային առումով կարելի է բաժանել միագագաթ (միաբևեռ) և երկգագաթ (երկբևեռ) տեսակների:

Նման կառույցների արտահայտության պլանում, ինչպես նշեցինք, հանդես են գալիս որոշակի սպասարկու բառեր՝ նախադրություններ և հետադրություններ, թեև նրանց բնութագրման հարցում կարևոր նշանակություն ունեն գերադաս բաղադրիչի բառաքերականական հատկանիշները:

Քննարկենք գերադաս բաղադրիչ + նախադրություն (հետադրություն) կառույցով ՊԿԿ-ները՝ ըստ գերադաս բաղադրիչի խոսքիմասային պատկանելության:

Ա) Ածական + գոյական + նախադրություն (հետադրություն) կաղապար.

Այս կառուցատիպերում ի հայտ են գալիս կառուցվածքային տարբերակներ, դրանք են՝ *ածական+նախադրություն կառույց, նախադրությամբ կառույց+ածական:*ա) *Ածական + նախադրությամբ կառույց:* Այսօրինակ կապակցություններում ածականական բաղադրիչին ստորադասվում է համեմատության իմաստ արտահայտող նախադրություն + որևէ հոլովով արտահայտված խնդիր:

1. Հայցականով խնդրառու նախադրությամբ ՊԿԿ-ներ:

Ածական + որպէս + հայցականով խնդիր. հմմտ. տարբերակային պարզ // մաքուր որպէս հայելի:

Ածական + իբրև + հայցականով խնդիր. հմմտ. սեաւ իբրև զինդիկ, խաղաղ իբրև զդրախտ:

Ածական + զանչ + հայցականով խն-

դիր. հմմտ. կեղծաւոր զանչ զսատանայ:

Ածական + զերդ + հայցականով խնդիր. հմմտ. քաղցր // անուշ զերդ զշաքար, անյաջող զերդ զգերի:

Ածական + քան + հայցականով խնդիր. հմմտ. ահեղակերպ քան զփայլակն[1]:

Հմմտ. Աւազան՝ ջրով լցեալ՝ *պարզ և մաքուր* ***որպէս*** *հայելի* (ՆՀ, ՀԳՔ, 180): Ծնաւ որդի՝ *սեաւ* ***իբրև*** *զինդիկ* (ՎՔ, ԲԿՁՀ, 111): *Ոմանք ցուցնեն զիրենք քաղցր ու անուշ* ***զերդ*** *զշաքար* (ՎՔ, ՄՀԲ, 68):

Վերոբերյալ բոլոր օրինակ-նմուշները երկանդամ ստորադասական կապակցություններ են, որոնց գերադաս և կախյալ բաղադրիչները հանդես են եկել առանց ծավալումների:

Այդօրինակ կապակցություններում սակավադեպ են ծավալումներով դրսևորվող միավորները:

Հմմտ. *պայծառ քան զքաֆուր վարդ* ՊԿԿ-ն, որում ծավալիչ (լրացում) է ստացել նախադրությամբ կառույցը (ՊԿԿ-ի ստորադաս բաղադրիչը):

2. Տրականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

Ածական + նման + տրական խնդիր. հմմտ. կարմիր նման վարդի[2], ամուր քարի նման[3]:

Այս կառույցում նույնպես հնարավոր են ծավալումներ, հմմտ. *բարձր թուխ ամպի նման* ՊԿԿ-ն:

Նախադրությամբ կառույց+ածական: Այս կաղապարով ձևավորված ՊԿԿ-ներում ի հայտ են գալիս տարբեր հոլովներով խնդիր ստացող նախադրություններ:

1. Հայցականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

Զինչ նախադրությունը հայցական խնդրով + ածական. հմմտ. զինչ կաթն սպիտակ:

Զերթ նախադրությունը հայցական խնդրով+ածական. հմմտ. զերթ կարկուտ պաղ // սպիտակ, զերթ մոմ կակուղ:

Իբրև նախադրությունը հայցական խնդրով+ածական. հմմտ. իբրև գնդակ բոլոր:

Քանց (քան + ց նախդիր) նախադրությունը հայցական խնդրով + ածական. հմմտ. քան զթերթ վարդի, քանց զլատիֆդ աղտոր:

Հմմտ. Սիրէ զքո ընկերն անկեղծ, *անապատ* ***զինչ*** *կաթն սպիտակ* (ՎՔ, ԲԿՁՀ, 111): Շողեղէն պատկեր՝ ***քան*** *զթերթ վարդի* (ն. տ., 33): Շաքրէ եղէգին մէջէն ես քաշած *քանց զլատիֆդ աղտոր* (ՍՂ, 242):

2. Սեռականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

Չափ նախադրությունը սեռական խնդրով և ածականով. հմմտ. *մահու չափ անհանգիստ, Աստծոյ չափ երախտաւոր:*

Հմմտ. *Մահու չափ անհանգիստ* պահեն, յայլ տեղ ոչ երթայ (ՎՔ, ԲԿՁՀ, 111):

3. Տրականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

ա) *Նման* նախադրությունը (հետադրությունը) տրական խնդրով + ածական. հմմտ. *արեգական նման պայծառ, նրման արեգական գեղեցիկ:*

Հմմտ. *Նրման արեգական է գեղեցիկ,* որ լոյս կու տայ (ԿԵ, ՀԳՔՔ, 234):

Արեգական նման պայծառ Երեսդ լոյս էր կամար (ՀԹ, ՀԳՔ, 161):

Նախադրությամբ կառույց+ածական կաղապարով ՊԿԿ-ներում երբեմն հանդիպում են ծավալումներով կառույցներ. զերդ զլուսին սուրաթ բոլոր, զերդ արիւն ալ պղտոր, զերթ կարկուտ պաղ և սպիտակ կապակցություններում ծավալման են ենթարկվել գերադաս բաղադրիչները:

Հմմտ. Ձգեաց հետ քար՝ *զերթ կարկուտ պաղ և սպիտակ* (ՎՔ, ՄՀԲ, 68):

բ) Բայ + գոյական + նախադրություն կաղապար.

Այդ կարգի միավորումներում ևս առկա են կառուցվածքային-շարադասական տարբերակներ՝ բայ+նախադրությամբ կառույց և նախադրությամբ կառույց+բայ:

---

1 Խելքդ պակաս քան զերեխոյ ՊԿԿ-ում առկա է զ նախդիր + սեռական խնդիր կառույցը:

2 Հմմտ. կարմիր երես նման վարդի անվանական հարադրությամբ ձևավորված ՊԿԿ-ն:

3 Նման սպասարկու բառը, ինչպես տեսնում ենք, գոյականի՝ իր խնդրի նկատմամբ կարող է գործածվել թե՛ նախադաս, թե՛ հետադաս:

Բայ+նախադրությամբ կառույց.

1. Հայցականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

Բայ + իբր + զ + հայցական. հմմտ. խաղաղանալ իբր զդրախտ:

Բայ + որպէս + (զ նախդիր) + հայցական. հմմտ. շողշողել(իմ) որպէս զլոյս, ճեմել(իմ) որպէս իշխան, նստել(իմ) որպէս արքայ:

Բայ + զէր + հայցական. հմմտ. գունատվել զէտ զզաֆրան:

Բայ + զինչ + զ + հայցական. հմմտ. երևալ զինչ զհրեշտակ:

Հմմտ. *Խաղաղացաւ իբր զդրախտ* (ՎՔ, ՄՀԲ, 155):

2. **Տրականով խնդիր + նման** (նախադրություն – հետադրությամբ) է կազմվել *դեղնել խնկիդ նման* ՊԿԿ-ն:

Նախադրությամբ կառույց + բայ.

1. Հայցականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

Զինչ (+ զ նախդիր) + հայցական + բայ. հմմտ. *զինչ մում հալել (իմ), զերդ մում կակուղ լինել:*

Զերդ + հայցական + բայ. հմմտ. զերդ կուպր եռալ:

Քան + զ + հայցական + բայ. հմմտ. քան զմում հալել(իմ), քան զփորձած ոսկի լինել, քան զկարմիր խնծոր բոլորել:

Որպէս + զ + հայցական + բայ. հմմտ. որպէս զշուն հաչել:

Հմմտ. Տղայոց միտք *զերդ մում կակուղ կու լինի* (ՎՔ, ԲԿԶՀ, 111): *Քան զփորձած ոսկի լինի,* որ ի բովէն ահ չունենայ (Ֆ, 49):

2. Տրականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

Նման + տրական + բայ. հմմտ. սիրամարգի նման քայլել (իմ):

Պէս + տրական + բայ. հմմտ. շան պէս ուրանալ:

Այսպիսի ՊԿԿ-ներում երբեմն հանդիպում են ծավալված բաղադրիչներով կապակցություններ:

Հմմտ. գերադասի ծավալումով դրսևորվող *քան զուռ ի վեր վազել, քան զմումն առաջն ի վառ լինել(իմ)* ՊԿԿ-ները, ինչպես՝ *Քան զուռ ես ի վեր վազեր,* (ՎՔ,ՄՀԲ, 162):

Ստորև բերվող միավորներում ծավալվել է ստորադաս բաղադրիչը (նախադրությամբ կառույցը). հմմտ. *զէր աշնան դազել դողալ, քան կարմիր խնծոր բոլորել, քան սևացեալ ամպ ցօղալ,* ինչպես՝ *Քան զկարմիր խնծոր բոլորեր* (ՎՔ,ՄՀԲ, 162):

Ինչպես տեսնում ենք, քննարկվող կապակցություններում սակավադեպ են բազմանդամ միավորները:

գ) Նախադրություն + խնդիր կաղապարով (միագագաթ) ՊԿԿ-ներ:

Այդօրինակ ՊԿԿ-ները կառուցվածքային առումով հանդիպում են առանց գերադաս անդամի: Նրանցում նախադրության հետ մեկտեղ հանդես է գալիս լիիմաստ մեկ բաղադրիչ, այդ իսկ պատճառով այդ կարգի միավորները կոչվում են միագագաթ: Ըստ որում, «նախադրություն + խնդիր» կապակցությունը կարող է հանդես գալ թե՛ առանց ծավալումի և թե՛ ծավալումներով:

Դիտարկենք միագագաթ կառույցներն ըստ հոլովառու բառերի և նրանց խնդիրների: Ստորև բերվող ՊԿԿ-ները հանդես են գալիս որպես չծավալված կառույցներ:

1. Հայցականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

Քան + զ + հայցական. հմմտ. *քան զնուռն, քան զթերթ (վարդի), քան զգերի, քան զմարգարիտ, քան զոսկի, քան զծով, քան զմայր*[1]*:*

Հմմտ. Շողեղէն պատկեր՝ *քան զթերթ վարդի* (ՎՔ,ՄՀԲ, 33):

Կառույցում կարող են լինել փոխանվանաբար գործածված անդամներ, հմմտ. քան զմեծատունն ՊԿԿ-ն:

Հմմտ. *Քան զմեծատունն* եմ յղփացեալ, Ակրն հոգոյս է խաւարած (Ֆ, 75):

Հանց + հայցական. հմմտ. հանց խո-

1 Հմմտ. քան (// զերդ կամ զինչ) + զ նախդիրը սեռական խնդրով կառույցն ունեցող հետևյալ կապակցությունները. քան//զերդ զգայլոյ, քան//զերդ զառիւծոյ, քան//զինչ զձիոյ//զջորոյ:

ձայ:

Զերդ + զ + հայցական. հմմտ. զերդ զգերի կառույցում ի հայտ եկող հետևյալ փոխանունությունը. զերդ զյիմար. Եղայ զերդ ըզյիմար, 'ւ իսկի մարդու ի խոստ չեկայ (ԿԵ, ՀԳՔՔ, 235):

Զինչ + հայցական. հմմտ. զինչ զհրեշտակ:

Որպէս + հայցական. հմմտ. որպէս իշխան, որպէս արքայ:

2. Սեռական խնդրով նախադրությամբ կաղապար.

Չափ[1] *+ սեռական.* հմմտ. ծովին չափ, մահու չափու, փոխանունությամբ՝ մեռելոյն չափ:

3. Տրականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

Նման (նախադրություն // հետադրություն) + տրական. հմմտ. նման Յուդայի, նման վարդի, նման հրեշտակի, ամպոյ նման, արեգական նման, աստեղաց նման, հազրեվարդի նման, սիրամարգի նման:

Զինչ + նման + տրական խնդրով կառույց ունի *զինչ զարնան նման* ՊԿԿ-ն:

Հմմտ. Երեսդ է *լուսնի նման* (ՆՔ, ՀԳՔ, 174): Աստէն թէ ջահով ելնէք, *խմաստնոց նման* կու լինիք (Ֆ, 85):

Պէս հետադրությունը տրական խնդրով: Այսօրինակ կաղապարով ՊԿԿ-ներում ուշագրավ են զէտ նախադրություն + պէս հետադրություն + տրական կառույցով միավորները. հմմտ. *զէտ ոչխարի պէս:* Այսպիսի կառույցներում երբեմն հանդես են գալիս փոխանուն բաղադրիչներ, հմմտ. *զէտ խէվի պէս:*

Հմմտ. Կու *մորթեմ զէտ ոչխարի պէս* (ՎՔ, ԲԿԶՀ, 317): Ատեն ատեն *զէտ խէվի պէս* ձրի խօսվի զրոյց մարդն (ՎՔ, ԲԿԶՀ, 317):

Միջինհայերենյան միագագաթ ՊԿԿ-ների ձևայնացված (կաղապարավորված) մեկնաբանությունն այս ամենով չի սպառվում. այդօրինակ կառույցներում ի հայտ են գալիս նաև ծավալված բաղադրիչներով ՊԿԿ-ներ:

Հմմտ. հայցական + նախադրություն կաղապարով հետևյալ միավորները.

զէտ մանկակորուստ կաքաւզինչ զարնան կայծակն ի յամպէն

զինչ հաւն երամէն ի զատքան սեւացեալ ամպ

քան զկաթն զիստակքան զէրն քաղցրիկ

քան զանգէտ աղքատքան զթերթ վարդի

քան զփորձած ոսկիքան զմարգարիտ պայծառ շարած

քան զամէն ծաղիկ պայծառքան մեծատունն յղփացեալ

քան զքանասար գայլ ոչխարի և այլն:

Ինչպես ցույց է տալիս միջին հայերենի ՊԿԿ-ների ձևայնացված նկարագրությունը, հայերենի զարգացման այդ շրջանին բնորոշ են ինչպես գրաբարյան կաղապարներ, այնպես էլ առանձնական (միջին հայերենին հատուկ) կաղապարներ[2]:

II. ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՊԿԿ-ՆԵՐ

Միջին հայերենի նախադասություն-դարձվածքների մեջ իրենց կառուցվածքային-քերականական առանձնահատկություններով աչքի են ընկնում հաղորդակցական ՊԿԿ-ները, որոնք ունեն նախադասությանը հատուկ բոլոր հատկանիշները: Ընդ որում դրանք բնութագրվում են նախադասության անդամների կայուն շարադասությամբ:

Հմմտ. *Միրտրդ լցած է նենգութեամբ, Քան ըզգայլոյ և զառիւծոյ* (Ֆ. 98):

Ի՞նչ յուրահատկություններ են դրսևորում միջինհայերենյան հաղորդակցական ՊԿԿ-ները:

1. Բայի եղանակաժամանակային և դիմաթվային ձևերը գործառական սահմանափակումներ ունեն: Դրանք հանդես

1 Միջին հայերենում չափ հոլովառու բառը հանդես է գալիս և որպես նախադրություն, և որպես հետադրություն:

2 Վերջիններս վերաբերում են որևէ առանձին լեզվի. այդպիսի կաղապարները կառուցվում են առանձին լեզվի համար (տես Լ.Մ.Խաչատրյան, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Ե., 2011, էջ 9):

են գալիս՝

Ա. Որոշակի դեմքով ու թվով. *Երազի նման է* (ՎՔ,ՄՀԲ, 109) – 3-րդ դ., եզ. թ.:

Բ. Միայն մեկ եղանակով. *Զինչ եկնէ արեւն ի մօրէն* (ՆՔ, 62) – (միայն ըղձական եղանակով. գրաբարյան սահմանական ներկան՝ ըղձականի իմաստով):

Ստամոքսդ արձակ *ես* դու *զուգել, Քան զձիոյ և զջորոյ* (Ֆ., 98) – միայն սահմանական եղանակով:

Միրէ՛ զքո ընկերն անկեղծ, անարատ, *զինչ կաթն սպիտակ* (ՎՔ, ԲԿԶՀ, 111) – միայն հրամայական եղանակով:

Գ. Ժամանակային սահմանափակումներով. Մուրօքըդ մարդ ես կատարեալ, *Խելքըդ պակաս քան զերեխոյ* (Ֆ., 99):

2. Դրանք մեծ մասամբ հաստատական նախադասություն-դարձվածքներ են:: Ըստ որում, այդօրինակ կապակցություններն արտահայտության պլանում ունեն հաստատական, բովանդակային պլանում՝ ժխտականության իմաստ:

Հմմտ. վերոբերյալ *Մուրօքըդ մարդ ես կատարեալ, Խելքըդ պակաս քան զերեխոյ* ՊԿԿ-ն, որը նշանակում է՝ ,,ոչինչ չես հասկանում, անօգուտ է քեզ հետ խոսելը,,:

3. Դրանք հիմնականում պատմողական բնույթի նախադասություն-դարձվածքներ են: Հմմտ. *Ասես թէ մարդ ենք սպանել* (ՆՔ, 86):

4. Երկկազմ ՊԿԿ-ները թե՛ պարզ և թե՛ բարդ նախադասություններ են: Հմմտ. պարզ ընդարձակ նախադասության ձևավորում ունի *Տղայոց միտք զերթ մոմ կակուղ կու լինի* ՊԿԿ-ն (ՎՔ, ԲԿԶՀ, 111):

Կազմությամբ բարդ համադասական նախադասություն է *Մուրօքըդ մարդ ես կատարեալ, Խելքըդ պակաս քան զերեխոյ* ՊԿԿ-ն, որի երկրորդ միավորն առաջինի նկատմամբ ցուցաբերում է տրոհական հարաբերություն:

Բարդ ստորադասական նախադասության ձևավորում ունի *Զինչ նաւն ի ծովուն միջին Կերերայ, թէ երբ գայ քամին* ՊԿԿ -ն (Ֆ., 173):

Հաղորդակցական ՊԿԿ-ներում առանձնանում են բարդ ստորադասական նախադասության կախյալ բաղադրիչ համարող կառույցները: Հմմտ.

Զինչ եկնէ արեւն ի մօրէն: Ասես թէ մարդ ենք սպանել:

Ուշագրավ են հատկապես միակազմ դիմավոր նախադասություն-ՊԿԿ-ները:

Հմմտ. *Երազի նման է* (ձևական դիմային նշանակությամբ ՊԿԿ):

Միրէ զքո ընկերն անկեղծ անարատ, զինչ կաթն սպիտակ (ընդհանուր դիմային նշանակությամբ) և այլն:

Միակազմ հաղորդակցական ՊԿԿ-ներում առանձնանում են յուրահատուկ կառույցներ, որոնք համընկնում են բայական անդեմ նախադասություններին: Հմմտ.

Աղօթք ամբիծ մատուցանել, *Քան զՅովաննու կարապետի.* Վասն աստուծոյ մեզ մեռանել, *Քան զվկային Ստեփաննոսի* (Ֆ., 115):

Այսպիսով, գրաբարում ՊԿԿ-ները բնութագրվում են որոշակի կառուցատիպերով, որոնք բաժանվում են անվանողական (բառակապակցական) և հաղորդակցական (ստորոգումային) տեսակների:

Բառակապակցական ՊԿԿ-ները կառուցվածքային առումով բաժանվում են միագագաթ (միաբևեռ) և երկգագաթ (երկբևեռ) տեսակների, որոնց ներքին դասակարգումների համար կարևորվում են գերանդաս բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը և քերականական արտահայտությունը: Հաղորդակցական ՊԿԿ-ներն ունեն նախադասությանը հատուկ հատկանիշներ և բնութագրվում են կառույցի բաղադիչների կայուն շարադասությամբ:

Միջին հայերենի գրական հուշարձաններում թե՛ անվանողական և թե՛ հաղորդակցական ՊԿԿ-ներն ունեն ընդգծված ոճական-արտահայտչական դեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խ.Բադիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986:
2. Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Ե., 1990:
3. Լ.Մ.Խաչատրյան, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Ե., 2011:
4. 4. А. Г. Назарян. Фразеология современного французского языка, М., 1987.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԵ, ՀԳՔՔ - Կ. Երզնկացի, Ոմանք չարախօսեն զինէն վասն նախանձու, Հայ գրական քննադատության քրեստոմատիա, Ե., 1981:
ՀԹ,- Հովի. Թլկուրանցի, Տաղ քաջ Լիպարտին, Հայ գրականության քրեստոմատիա, Ե., 1992:
ՆՀ, ՀԳՔ - Ն. Հովնաթան, Հայ գրականության քրեստոմատիա, Ե., 1992:
ՆՔ - Ն. Քուչակ, Հարյուր ու մեկ հայրեն, Ե., 1987:
ՍՂ - Ս.Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 1981:
ՎՔ,ԲԿԶՀ - Վ. Քոսյան, Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում, Ե., 1990:
ՎՔ,ՄՀԲ - Վ.Քոսյան, Միջին հայերենի բառակապակցությունները, Ե., 1984:
Ֆ - Ֆրիկ, Բանաստեղծություններ, Ե., 1941:

СТРУКТУРНЫЕ ТИПЫ ОБРАЗНЫХ УСТОЙЧИВЫХ СОЧЕТАНИЙ В СРЕДНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ЛАЛИК ХАЧАТРЯН

Профессор кафедры армянского языка и методики его преподавания Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна, доктор филологических наук

Структурные типы образных устойчивых сочетаний в среднеармянском языке характеризуются конкретными моделями, которые разделяются на следующие подгруппы:

а) номинативная: *մաքուր որպէս հայելի, քաղցր զերդ զշաքար,*

б) коммуникативная: *շողշողել(իմ) որպէս զլոյս,երևալ զինչ զիրեշպակ.*

В плане образования таких структурных типов важную роль играют способы выражения доминантного компонента, грамматические признаки зависимого члена, расположение элементов сочетания, а также связующие особенности предлогов.

STRUCTURAL TYPES OF IMAGE-BEARING SET-COMBINATIONS IN MIDDLE ARMENIAN

LALIK KHACHATRYAN

Doctor of Philology, Professor of ASPU after Kh. Abovyan

The structural types of image-bearing set-combinations in Middle Armenian are characterized by specific models, which are divided into the following groups:

a. nominative - *մաքուր որպէս հայելի, քաղցր զերդ զշաքար,*

b. communicative - *շողշողել(իմ) որպէս զլոյս,երևալ զինչ զիրեշպակ,*

In terms of the formation of these structural types the ways of expression of dominant component play important role the grammatical features of a dependent member, layout combinations, as well as binding characteristics of prepositions.